

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ.Ա.ԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ



Հերթական առևտավարման ենթակա ուսուցիչների

վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

ՏՀՏ գործիքների կիրառությունը ուսումնառության ընթացքում և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով

Անցկացման վայրը՝

Վարդենիս

Առխտանքի ղեկավար՝

Հասմիկ Բեյբուրյան

Ուսուցիչ՝

Առաքելյան Մարինե

Դպրոց՝

Վարդենիսի N^o 4 հիմնական դպրոց

Վարդենիս 2022թ.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տխտոսաթերթ	1
Բովանդակություն	2
Ներածություն	3
Գրական ակնարկ	4
Փորձարարական հետազոտություն	7
Դասարանի նկարագիրը	8
Բուն դասապրոցեսը	9
Հայտարարիչ թեստ	12
Եզրակացություն	13
Վերլուծություն	14
Հավելված		
Դասի պլան	15
Օգտագործված գրականության ցանկ	20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Քսանմեկերորդ դար. Հրաժեհները ստեղծվում են ոչ թե սիրով, այլ տեխնիկայով»:

Օֆսանա Ռոբսկի

Մեր արագ փոփոխվող ժամանակակից դարում համակարգչային գիտությունը դարձել է նորմ, առանց որի այսօր հնարավոր չէ պատկերացնել մեր կյանքը, այն դարձել է մեր առօրյա մի մասը: Կասկած չկա, որ զարգացող տեխնոլոգիական առաջընթացը կարևոր ազդեցություն ունի մեր կյանքի վրա, և անընդհատ մարդկությանը տալիս է նոր տեղեկատվություն: Արդեն մարդկային գոյության որակը սկսում է կախված լինել նրանից թե որքանով են հասկանում դրանք:

Եթե մարդը գիտի, թե ինչպես վարվել համակարգչային տեխնոլոգիաների հետ ու ապրում է ժամանակի ուրիշով:

SZS՝ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, յուրաքանչյուր սովորող, անհատ իր առօրյան չի պատկերացնում առանց համակարգչի կամ հեռախոսի, այս սարքավորումները մեզ անհրաժեշտ են օդ ու ջրի պես: Վերջինները օգնում են ստանալ ցանկացած տեսակի ինֆորմացիա, ինչու չէ նաև օգնում են մարդկանց աշխատանքում, ինչպես նաև ժամանցի նոր միջավայր է ապահովում է միմյանց հետ շփումը, չնայած կենդանի շփումը ավելի հանելի է, ինչպես նաև էական նշանակություն ունի կրթության ոլորտում:

Իսկ դասապրոցեսում SZS-ի կիրառումը պարտադիր է: 21-րդ դարը համա-կարգչային տեխնոլոգիաների դար է: Ժամանակակից սովորողը ապրում է էլեկտրո-նային մշակույթի դարում:

Իմ հետազոտական աշխատանքում փորձել եմ ներկայացնել SZS գործիքների կիրառությունը ուսումնառության մեջ, որ արդյունքում պետք է բարձրացնենք ուսումնառության արդյունավետությունը և որակը, ապահովենք միջառարկայական կապերը:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սովորեցրու ինչպես կարող ես,

Սովորիր ինչպես ուզում ես:

Լ. Դավթյան

«Ինֆորմատիկա» բառը աշխարհի գրեթե բոլոր լեզուներում նշանակում է գիտություն, որ կապված է հաշվողական տեխնոլոգիայի կամ համակարգչի հետ: Ինֆորմատիկան գիտություն է որը ուսումնասիրում է ինֆորմացիայի ստացման, պահպանման, մշակման, փոխանցման գործընթացները և դրանց ուղղված մեթոդները:

«Համակարգիչը դարձրեցում դիտարկվում է որպես ուսումնառության հիմնական միջոցներից մեկը, իսկ ինֆորմատիկան՝ ուսումնական նյութի արդյունավետ յուրացմանը նպաստող համապիտանի առարկա:

ՏՀՏ-ի օգտագործումը որակապես փոխում է ուսուցչի դերը. Ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպողը, նրան օժանդակող և գնահատող գործընկեր:

ՏՀՏ-ը սերտորեն առնչվում են բոլոր առարկաների դասավանդմանը:

Առարկայի դասավանդումը նպաստում է նաև ժամանակակից համակարգչային ուսուցողական ծրագրերով այլ առարկաներից որոշակի նյութ հաղորդելուն, սովորողների կողմից դրա յուրացմանը¹»:

ՏՀՏ-ն ժամանակակից կյանքում օգտագործվում է մի քանի հիմնական ուղղություններով՝

- ✓ Հաշվողական համակարգերի և անհրաժեշտ ծրագրակազմի մշակում
- ✓ Տեղեկությունների տեսությունը, որը ուսումնասիրում է դրա հետ կապված բոլոր գործընթացները
- ✓ Արհեստական հետախուզության մեթոդներ
- ✓ Համակարգի վերլուծություն
- ✓ Մեքենայի անիմացիայի և գրաֆիկայի տեխնիկա

¹ Կրթական Գլուխ 13

- ✓ Հեռահաղորդակցման հարմարություններ, որոնք ներառում են գլոբալ հեռավարություններ
- ✓ Տարբեր ծրագրեր, որոնք ընդգրկում են մարդու գործունեության գրեթե բոլոր ասպեկտները:

ՀՀ դպրոցներում ինֆորմատիկա առարկան դասավանդվում է շաբաթական 1 ժամով, որ այսօրվա տեղեկատվական դարում շատ քիչ է¹: Ինֆորմատիկա առարկան զարգացնում է՝

- ✓ Կյանքի ուժանիկ համընթաց ֆայլելու կարողությունը
- ✓ Նպաստում է ստեղծագործական և գեղագիտական զարգացմանը
- ✓ Տալիս է ինֆնակրթվելու լայն հեռավարություններ

- ✓ Հետաքրքրող նյութի որոնում և դուրս բերում

SՀՏ-ում կան մի քանի կարևոր գործընթացներ: Նախ աշխարհի կապակցությունն աճում է հեռահաղորդակցական լուծումների շնորհիվ, ցանցով փոխանցվող տվյալների ծավալը մեծանում է, և այդ տվյալների մշակման համար լուծումներ են մշակվում: Երկրորդ՝ թվային լուծումները դառնում են ավելի հարմարավետ օգտագործողի համար:

Այսօր ավանդական «ուսուցիչ – աշակերտ – դասագիրք» սխեմային ավելանում է մի նոր օղակ՝ համակարգիչ՝ համակարգչային ուսուցում: Հետևաբար SՀՏ-ի կիրառումը դասալրացեպին թույլ է տալիս՝

- ✓ Սովորողների գործունեության արդյունավետ կազմակերպում
- ✓ Պարապմունքների ընթացքում կատարվող աշխատանքի ծավալի ավելացում
- ✓ Գիտելիքների վերահսկում, արագ և արդյունավետ գնահատում

Այն գործուն և արդյունավետ ուսումնառության հնարավորություններ է ընձեռնում: Համակարգչային դասարանում աշակերտները զարգացնում են իրենց ուսումնական հմտությունները և ընդլայնում ըմբռումները՝ կիրառելով համակարգչային տեխնիկան, հնարքեր կարողանում են օգտվել համացանցի ընձեռնած հնարավորություններից:

Դասին SՀՏ-ի կիրառման նպատակներն են՝

¹ ՀՀ պետական չափորոշիչ

- ✓ Ձևավորել և զարգացնել հիշատակ և արագ կողմորոշվելու կարողությունը
- ✓ Ստեղծել հարմարավետ միջավայր
- ✓ Օգտագործել SՀՏ-ի ռեսուրսները նպատակային
- ✓ Ստեղծել միջառարկայական կապեր

Հետազոտության նպատակն է՝

- ✓ Բարձրացնել սովորողների մոտիվացիան
- ✓ Բարձրացնել ուսումնառության որակը նոր մակարդակի
- ✓ Մեծացնել ուսումնական գործընթացի արդյունավետությունը
- ✓ Համակարգչային ծրագրերից օգտվելու կարողություն

Հետազոտության խնդիրները

- ✓ Բարձրացնել SՀՏ-ի օգտագործման արդյունավետությունը
- ✓ Լիարժեք օգտվի համակարգչի ընձեռնած հնարավորություններից
- ✓ SՀՏ-ի օգնությամբ ստեղծել դիդակտիկ նյութեր
- ✓ Սովորողների մտածելակերպի փոփոխություն SՀՏ-ի նկատմամբ

✓ **Ուսումնական նյութի յարացման մատչելիություն:**

Ցանկացած առարկա դասավանդելիս անհրաժեշտ է լրջորեն վերաբերվել յուրաքանչյուր թեմայի յարացմանը, սովորողների գիտելիքների համակարգմանը, ամրապնդմանը, ընդհանրացմանը և ամենաակարևորը գնահատմանը: Այսօր աշակերտների մոտ հետաքրքրությունները ուսման նկատմամբ մարել են, նրանց դպրոց գալը և դաս սովորելը դարձել է անհետաքրքիր: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է դասապրոցեսի ընթացքում կիրառել SՀՏ-ի ընձեռնած գործիքները և հնարավորությունները:

3. Փորձարարական հետազոտություն

Այսօր համակարգիչներ օգտագործելու ունակությունը կարող է նույնքան կարևոր լինել, որքան կարգալու, գրելու, ձայնագրելու, մեքենա վարելու կամ հեռախոսից օգտվելու ունակությունը:

SZS-ի օգտագործումը կտրուկ փոխում է ուսուցչի դերը, ուսուցիչը դառնում է սովորողի կրթական գործը կազմակերպող, նրան աջակցող և գնահատող գործընկեր: Յուրֆանջյուր առարկայի դասին տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործումը ուսումնական նյութն ավելի գրավիչ և հասկանալի է դարձնում:

SZS-ի կիրառումը մեծ դեր և նշանակություն ունի ուսման որակի բարձրացման և ֆաղափակիրք անհատի և ֆաղափացու կերտման գործընթացում:

Ինֆորմատիկա առարկայի առավելությունը այն է որ սովորողները կարելի է ասել դասին երբեք չեն ձանձրանում , դասի նկատմամբ հետաքրքրությունները չեն կորցնում: Կարողանում են ինֆորմացիոն ձեռք բերել նոր գիտելիքներ և հաղորդել ուրիշներին:

Այսօրվա դասի թեման՝ Ամփոփիչ դաս՝ MS Office Word և MS Office PowerPoint ծրագրերի համեմատություն: (Տես հավելվածը էջ 15)

Առակերտները ըստ դասապլանում նկարագրածի բաժանվում են խմբերի, ամեն խմբից մի քանի առակերտներ աշխատում են համակարգչով որպեսզի իրենց նյութը ավելի գեղեցիկ ներկայացնեն համակարգչային ցուցադրումների՝ սահիկների, օգնությամբ: Տեսական մասը ներկայացնելուց հետո անցում են կատարում գործնական աշխատանքի:

Ուսուցման գործընթացի արդյունավետությունը մեծապես կախված է դասադասցեսի նիշտ պլանավորումից, ինչպես նաև էական նշանակություն ունի SZS-ի կիրառումը: Կրթության գործընթացում SZS-ի կիրառման մի քանի ուղղություն է նշվում.

- ✓ Համակարգիչ՝ որպես գիտելիքների ստուգման միջոց
- ✓ Գործնական աշխատանք՝ համակարգչային մոդելավորում
- ✓ Տեխնոլոգիաները՝ ցուցադրման միջոց նոր նյութը բացահայտելու ընթացքում
- ✓ Անհատական համակարգիչ՝ որպես ինֆրակոմպյուտերային միջոց

3.1 Դասարանի նկարագիրը

Իմ հետազոտական աշխատանքը իրականացրել էմ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի թիվ 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանում, այս դասարանում ունեմ աշակերտներ որոնք սիրում են աշխատել համակարգչով և հեռախոսներով, բայց ժամանակի մեծ մասը անցկացնում են համացանցում, սակայն սիրում են համացանցային խոյեր խոյալ, կինոներ և տեսանյութեր դիտել, բայց չեն փորձում իրենց ժամանակը օգտագործել նպատակային:

Վերջինս հիմք հանդիսացավ որպեսզի իմ հետազոտական աշխատանքը անցկացնեմ տվյալ դասարանում, փորձելով ավելի արդյունավետ դարձնեմ SՆՏ-ների օգտագործումը սովորողների կյանքում: Պետք է հետևել, որ երեխան ոչ միայն խոյեր խոյալ, այլև օգտվի տեղեկատվական աղբյուրներից: Ինչը կնպաստի ցանկացած միջավայրում, ցանկացած պահի անհրաժեշտ ինֆորմացիայի ձեռք բերմանը, դառնալ ավելի ինֆորմույն, ինֆնավստահ, հետ չմնալ ժամանակի ուրիշից, և անհրաժեշտության դեպքում կիրառի իր առօրյաում:

Այս դասարանում սովորում են 20 աշակերտ , որոնցից 13-ը աղջիկ են, իսկ 7-ը տղա, սովորողները ունեն տարբեր առաջադիմություն և հմտություններ, ինչպես նաև բազմաբնույթ և բազմազան հետաքրքրություններ:

Ինֆորմատիկան դպրոցներում դասավանդվում է շաբաթական մեկ ժամով, և դասացուցակում այդ դասարանի դասաժամը 3-րդ ժամին է:

3.2 Բուն դասադրոցերը

Սկզբում սովորողներին բաժանեցի հայտորոշի թեստ (էջ9

<mailto:https://drive.google.com/drive/folders/1HOaZTmWlyztF4N33ZrY-GSosRGD7OgBu>), որպեսզի պարզեմ թե ինչ են հիշում անցած տարիների ուսումնական նյութերից: Բուլսըը լրացրեցին հայտորոշի թեստը, ոչ բոլորն էին հիշում անցած դասերի նյութերը: Հիմնական մասը հարցերի օգնությամբ ֆննարկեցին, վերհիշեցին, սկսեցին աշխատել:

Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս: Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին: Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան: Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է և անհրաժեշտ է առանձնահատուկ

մոտեցումներ: Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել: Հետևաբար՝ ուսուցման մեթոդներն ու հնարները պետք է ընկալել որպես գործիքներ, որոնց կիրառման մասին որոշումը կայացնում է ուսուցիչը, կախված սովորողների ընդունակություններից, նյութի յուրացման մակարդակից:

Այդ իսկ պատճառով ցանկալի է, որ ուսուցիչները տիրապետեն ուսուցման մեթոդներից գոնե մի քանիսին, և կախված դասարանի գիտելիքների մակարդակից, առկերտների կարողունակությունից կարողանա կողմնորոշվել թե որ մեթոդով աշխատի: Ուսուցման ժամանակակից մեթոդների են՝

- ✓ Մտավոր գրանցի մեթոդը,
- ✓ Խմբավորման մեթոդը,
- ✓ Հնգյակների մեթոդը,
- ✓ Վեցնի դիագրամի մեթոդը,
- ✓ Երեք բանալու կամ մեկ կողպեքի մեթոդը,
- ✓ Աֆրոստիֆոսի մեթոդը և այլն:

Ուսուցման մեթոդը ուսուցչի և սովորողի փոխկապակցված համատեղ գործունեության եղանակն է, որն ուղղված է կրթության բովանդակության յուրացմանը:

Հետզոտական աշխատանքն կատարեցի խմբային աշխատանքի մեթոդով: Որ համարվում է ուսուցման ժամանակակից մեթոդներից մեկը:

Ամփոփչ դասի նյութը նույն վաթեթի երկու ծրագրերի համեմատում է՝ **MS Office Word** և **MS Office PowerPoint**, խմբային աշխատանքի օգնությամբ, մեկը որպես հիմնական տեխստային խմբագրիչ, մյուսը որպես ցուցադրող խմբագրիչ, սովորողները խմբերով ներկայացրեցին ծրագրերի առավելությունները և թերությունները, դրական և բացասական կողմերը:

Հետզոտական աշխատանքին մասնակցեցին բոլոր առկերտները: Դասարանը բաժանեցին խմբերի, սպիտակ գույնի թերթիկների վրա գրված էր երկու ծրագրերի անունները՝ **MS Office Word** և **MS Office PowerPoint**, թերթիկները շուռ տվեցին, սովորողները ընտրեցին իրենց ցանկությամբ թերթիկները, կազմեցին իրենց խմբերը և հենց ծրագրերի անուններով էլ կոչեցին իրենց խմբերը: Թիմերին տրվեցին մարկերներ, գունավոր թղթեր, **A4** ֆորմատի թղթեր(նկ. 4.): Թիմերին տրվեց ժամանակ որպեսզի աշխատեն, թղթերի վրա ներկայացրեցին պատուհանի բաղադրիչ տարրերը, հրամանային ներդիրների կոճակները և ֆորմանց նշանակությունը, նշել էին ծրագրի առավելությունները և թերությունները:

Շրջելով դասարանում նկատեցի որ թե խմբային աշխատանքը, թե համակարգչի առկայությունը առկերտներին ոգևորել է, այն առկերտները ովքեր սիրում էին համակարգչով աշխատել բայց խղերով զբաղվել, կինոներ նայել, իրենց թիմի մասնակիցները առաջարկել էին պատրաստեն սահիկառարեր նյութի վերաբերյալ մի խումբը **Power point**-ի մասին էր հավաքում սահիկներ, իսկ մյուս խումբը **Word**-ի և դասարանում տիրում էր առողջ մրցակցություն, սիրով աշխատում էին, պատրաստում էին սահիկառարեր: Պլակատների վրա

սովորողները նշել էին նաև ծրագրերի ընձեռնած հնարավորությունների մասին, **Word**-ի մասին գրել էին(նկ.2.)՝

Տեքստի հավաքում և մշակում

Աղյուսակների ստեղծում

Դիագրամների ստեղծում

Մաթեմատիկական ֆունկցիաների կցում տեքստին **Equation** հրամանի օգնությամբ

Սիմվոլների կցում տեքստին

Թղթի համապատասխան չափերի սահմանում

Լուսանցքի չափերի սահմանում

Ուղղագրության և ֆերականության ստուգում

Կարող եմ օգտագործել **Find** և **Replace** հրամանը

Իսկ **Power Point**-ի մասին նշել էին(նկ.3.)՝


Տեքստի հավաքում(ի տարբերություն տեքստային խմբագրիչի այստեղ կարելի է կոնկրետ է գրվում)

Աղյուսակների ստեղծում

Նկարների և տեսախոլովակների , ձայնագրությունների կցում

Դիագրամների և պատրաստի պատկերների կցում

Design, Animations, Slide Show հրամանների կիրառում



օգնությունը (նկ.1.)՝

Հետազոտական աշխատանքի արդյունքում եկա այն եզրակացության որ, այս աշխատանքի արդյունքում սովորողները ովքեր ձգտում էին խաղեր խաղալուն, կինոնկարներ դիտելու, սովորեցին աշխատել համակարգչային ծրագրերով: Անհրաժեշտ է վստահել սովորողին, որպեսզի նրանք կարողանան ի ցույց դնել իրենց հնարավորությունները: Կարողացա բարձրացնել ՏՀՏ-ի արդյունավետությունը ուսումնառության ընթացքում, կարողանում են ստեղծել միջառարկայական կապեր, հատկապես սահիկներ էին ստեղծում և ներկայացնում մյուս առարկաների դասերին:

Այսպիսով ՏՀՏ տեխնոլոգիաները հնարավորություններ են ստեղծում կրթությունն ստանալ տարբեր երկրների կրթական հաստատություններում լիովին հաղթահարելով տեղի և ժամանակի խոչընդոտը: Սովորողը կարող է միանալ կրթական պորտալին ցանկացած տեղում և իրեն հարմար ժամին: ՏՀՏ-ն շարունակական կրթության կարևոր նախապայման է, անհատի, սովորողի շարունակական կատարելագործման մաս է կազմում ինքնակրթությունը:

Այսպիսով համակարգչի ներդրումը շատ կարևոր է դասապրոցեսում, քանի որ աշակերտները սովորում և զարգանում են տարբեր արագությամբ: Նրանք պետք է կարողանան ձեռք բերել, գնահատել, արժևորել և փոխանցել, առօրյայում կիրառել տեղեկություններ:

Տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ զարգանում են աշակերտների մտածողությունն ու գրելու հմտությունները, համակարգչով աշխատելու ընթացքում աշակերտը ավելի ինքնավստահ է:

Դասը բարդ ստեղծագործական աշխատանք է: Դասի գիտական կազմակերպումը պահանջում է ուսուցչից մանրակրկիտ նախապատրաստություն, որը ենթադրում է հետևյալ աշխատանքները: Դասը սովորողների կողմից նոր նյութի յուրացումն է, որին տրամադրվում է դասաժամի մեծ մասը: Դասի ընթացքում կարող են գործածվել այնպիսի եղանակներ, ինչպիսիք են խաղը, բացատրությունները, առանձին հարցերի շարք գրույցները, ֆննարկումները, ինքնուրույն աշխատանքները և այլն: Ուսուցիչը նախքան նյութի հաղորդումը պետք է ակտիվացնի սովորողների ուշադրությունը, մտավոր գործունեությունը, կազմակերպի ու համակարգի ստացվող գիտելիքները: Դասի հիմնական նպատակն աշակերտների պատրաստվածության գնահատելն ու շտկումներ կատարելն է: Դասերը սովորաբար կազմակերպվում են ստուգողական գրավոր աշխատանքների, շարադրությունների և փոխադրությունների տեսքով:

Վերլուծություն

ՏՀՏ-ի կիրառումը ակտիվացնում է սովորողների հանաչողական գործունեությունը թույլ է տալիս դասերն անցկացնել գեղագիտական և հուզական մակարդակով, անխնայ Ֆիլմերի ցուցադրմամբ, սահիկների կիրառումը պարունակում է հսկայածավալ դիդակտիկ նյութեր:

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների վրա հիմնված մեթոդները կարող են և պարտավոր են ազատելու ուսուցչին՝ հնարավորություն տալով նրան խնայել ժամանակը և ջանքերը ներդնել այն կարևոր գործում, որը պահանջում է մարդկանց միջև փոխներգործություն, ուսումնական միջավայրի մշտական գնահատում ու բարելավում:

Որպեսզի այս գարգացած դարում երեխաները իրենց ուսման ընթացքում լիարժեքորեն օգտագործեն կրթական տեխնոլոգիայի հիմնական տարրերը, անհրաժեշտ է, որ մանկավարժները տիրապետեն համակարգչային գրագիտությանը:

Համակարգչային ուսուցումը կարող է առավել բարձր արդյունք ապահովել միայն այն դեպքում, երբ լիարժեք գիտակցվի, որ դա բոլորի և յուրաքանչյուրի գործն է, երբ համակարգիչը հիմնավոր, կայուն ձևով մուտք գործի դասադասարարների մեջ, երբ համակարգչային գրագիտությունը տիրապետելու խնդիրը ձեռք բերի անձնային իմաստ և այն դիտարկվի որպես անհետաձգելի խնդիր:

SZS-ի կիրառումը թույլ է տալիս նյութը յուրացնել ավելի արագ և հեշտ:

Դասապլան

Ուսուցիչ՝ Մարինե Առաքելյան

Առարկա՝	Ինֆորմատիկա	Ամսաթիվ		Կիսամյակ	I	Դասարան	9
Թեմա՝	Ամփոփիչ դաս MS Office Word և MS Office PowerPoint ծրագրերի համեմատություն						
Օգտագործվող նյութեր՝	9-րդ դասարանի ինֆորմատիկայի դասագիրք, համակարգիչ, պրոյեկտոր, էլեկտրոնային գրատախտակ, լուկալ ցանց						
Ամբողջական պատկեր՝	Աշակերտները նախորդ տարիներին ուսումնասիրել են տեխնոլոգիան մասին, գիտեն ինչ որ փաթեթի ծրագիր է, ինչ ֆայլերի օգնությամբ կարող են մուտք գործել համակարգ, ինչ նպատակով և որտեղ կարող են կիրառել տեխնոլոգիան խմբագրիչները և համակարգչային ցուցադրումները:						
Դասի նպատակը՝	Խորացնել և ամրապնդել Microsoft office փաթեթի իմացությունը Թվարկել office կոմակոլ բացվող մենյուի հրամանները						

	<p>Ներկայացնել Microsoft Word և Microsoft Power Point 2007 համակարգի պատուհանի բաղադրիչները</p> <p>Թվարկել Word և Power point ծրագրի հրամանային տողի հիմնականում կիրառվող հրամանները</p> <p>Ներկայացնել Font բաժինը</p> <p>Ներկայացնել Insert բաժինը</p>		
<p>Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն որ ուսուցումը տեղի ունեցավ</p>			
<p>Վերջնարդյունքները</p>	<p>Առաջերսը կկարողանա՝</p> <p>Ինչպես են պահպանվում տվյալները սեփստային խմբագրիչում</p> <p>Կառուցել աղյուսակ և լրացնել այն</p> <p>Կցել նկարներ նյութին</p> <p>Փաստաթուղթը անվանավոխել, պատճենել, տեղափոխել, հեռացնել</p> <p>Թվարկել Home ներդիրի Clipboard խմբի գործիքների վահանակը</p> <p>Բացատրել մուտքի բայլերի հերթականությունը</p> <p>Ապահովել միջառարակայական կապերը</p>		
<p>Գործողություններ (ժամ/տևողություն)</p>	<p>Ուսումնական գործունեություն</p> <p style="text-align: center;">Առաջերսներ</p>	<p>Պլանավորված տարբերիում և ՈՒԳ ռազմավարություն</p> <p style="text-align: center;">Ուսուցիչ</p>	<p>Առանցքային հարցեր</p> <p>Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպատում է դասի նպատակին)</p>
<p>Մուտք, ներկա - բացակա/3ր/</p>	<p>Ողջույնի խոսքից հետո, դասարանից որևէ առաջերսներ կայացնում է բացակա առաջերսների բանակը, նշելով նրանց անուն/ազգանունները, որպեսզի խնայենք մեր ժամանակը</p>	<p>Էլեկտրոնային մատյանում կատարում է հաշվառում, նշում է բացակաները</p>	


<p>Սկիզբ/5-7ր/</p>	<p>Առակերտները լսում են հանձնարարությունը, և պատրաստվում դասին:</p>	<p>Ներկայացնում է խմբային աշխատանքի նշանակությունը և անցկացման ձևը</p>	
<p>Ընթացք/25-30ր/</p>	<p>Կարդում են իրենց թեման, յուրաքանչյուր խումբ իրեն հանձնարարված նյութերը, ֆննարկում են ինչ պիտի ներկայացվի A4 ֆորմատի թղթի վրա, ինչ պիտի գրվի, շարադրում են մտքերը, որպեսզի ներկայացնեն նյութը:</p> <p>Յուրաքանչյուր խմբի մի ֆանի առակերտ աշխատում են համակարգչով իրենց ծրագրերը ներկայացնելու համար, կիրառելով power point ծրագիրը՝ համակարգչային ցուցադրումները https://docs.google.com/presentation/d/1EO7_TuSBW5qE-NoxPH3kupa-XV1Ueckn/edit#slide=id.p1</p> <p>https://docs.google.com/presentation/d/1TUJvJRw5yNk9V47Ooz8AZR_SwsYR2Nfr/edit#slide=id.p1/</p>	<p>Բացատրում է կատարվելիք աշխատանքը, սեղանին դասավորում է թղթեր որոնց վրա գրված է word, power point, ծրագրերի անունները, այնուհետև շուտ է տալիս թղթերը (ֆանի որ դասարանում կան ընկերներ և ընկերուհիներ, որոնք ցանկանում են իրար հետ աշխատել, այդ պատճառով), սովորողները մոտենում են և փառում են թղթերը: Կարդում են թղթի վրա գրված ծրագրի անունները, և ըստ այդմ բաժանվում են խմբերի, սեղավորվում դասասեղանների շուրջ սկսում իրենց աշխատանքը:</p> <p>Սովորողներին տրվում է Թղթեր, տարբեր գույնի մարկերներ, գունավոր թղթեր :</p> <p>Շրջում է դասարանում, հետևում խմբերի</p>	<p>Ի՞նչ է տեխնոլոգիան խմբագրիչը:</p> <p>Ո՞ր վաթերի ծրագիր է:</p> <p>ԹՎարկե՛լ մուտքի ֆայլերը:</p>

	<p>Աժխտանքները պատրաստ լինելուց հետո սովորողները պատրաստվում են ներկայացնելու, երկու խմբերն էլ վերջացնում են և սկսում են ներկայացնելը:</p> <p>Խմբի անդամները սկսում են ներկայացնել, եթե լինում են բացթողումներ մյուս մասնակիցներն են լրացման, առաջին խումբը վերջացնելուց հետո սկսում է մյուսը նույն ձևով լրացնելով բացթողումները:</p> <p>Ներկայացնելուց հետո կատարում են համեմատություն ծրագրերի միջև, յուրաքանչյուր խումբ թղթերի վրա գրում են է կրեմց</p>	<p>աժխտանքին , ուղղորդում, ներգրավում բոլոր աշակերտներին, առաջադրում հարցեր:</p> <p>Հսում է խմբերի ներկայացրած նյութերը: Տալիս է նյութի վերաբերյալ հարցեր որոնք բաց էին թողնված:</p> <p>Այնուհետև առաջարկում ներկայացնել ծրագրերի առավելություններն ու թերությունները:</p>	<p>Ներկայացնել Վեննի դիագրամով երկու ծրագրերը:</p>
--	--	--	--

	<p>ծրագրի առավելությունները և թերությունները:</p> <p>Վերջնական համեմատումը կատարում են Վեցնի դիագրամի օգնությամբ (էջ 11)</p> <p>Աշակերտներին հնարավորություն է տալիս գուշակել թե ինչ նպատակներ կան դասին, հետո համեմատում են իմ նշած նպատակների հետ:</p> <p>Այնուհետև սովորողներին հանձնարարում են թերթիկների վրա գրել</p> <p>Ի՞նչ էր արժեքավոր:</p> <p>Ի՞նչ գիտելիքներ ձեռք բերցի:</p> <p>Հաջորդ անգամ ինչ թեմաներ համեմատենք:</p>	<p>Ներկայացնում է դասի նպատակների և վերջնարդյունքների իր տարբերակը, հանձնարարում է յուրաքանչյուրի աշակերտի թերթիկի վրա նշել իր կողմից նախատեսված վերջնարդյունքները սեփական ձեռքբերումների հետ, նշել նաև թերըմբռնումները՝ հաջորդ դասին անդրադառնալու նպատակով:</p>	<p>Ինչ առանձնահատկություններ ունեն այս ծրագրերը:</p> <p>Որ ծրագրի օգնությամբ ենք կարողանում տեխստեր ներմուծել:</p> <p>Չափանիշներ՝</p> <p>Թվարկել պատուհանի 5 բաղադրիչ տարրեր Մտքերի գրագետ շարադրանքի Տրամաբան ված, վերլուծական խոսք:</p>
--	---	---	---


--	--	--	--

Նկ. 2.




Samsung Quad Camera
By Marine

Նկ. 3.



Samsung Quad Camera
By Marine

Նկ. 4.



Samsung Quad Camera
By Marine

Օգտագործված գրականության ցանկ

1. «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցներում» Մելանյա Ասովաձատրյան , Հայկ Շարխարունյան, «Աստղիկ» հրատարակչություն, Երևան 2004
2. ՀՀ պետական չափորոշիչ
3. Հանրակրթության
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B4%D5%A1%D5%B6_%D5%A1%D5%AF%D5%BF%D5%AB%D5%BE_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4%D5%B6%D5%A5%D6%80
5. /Հերթական առեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման դասընթաց/ Վարդան Ավետիսյան
6. https://docs.google.com/presentation/d/1EO7_TuSBW5qE-NoxPH3kup-a-XV1Ueckn/edit#slide=id.p1
7. https://docs.google.com/presentation/d/1TUJvJRw5yNk9V47Ooz8AZR_SwsYR2Nfr/edit#slide=id.p1